

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

« 24 » դեկտեմբերի 2024 թվականի N 8-Լ

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 1-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13.1-ին կետով, 28-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 06-ի N 1298-Ա որոշման հավելվածի 36-րդ կետի 16-րդ ենթակետը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

**ՈՐՈՇԵՑ**

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին» N 1-Լ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ